ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. հոկտեմբերի 14-ից 18-ը ք. Վիլնյուս (Լիտվայի Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության՝
ավտոմոբիային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ Ռուզաննա Այվազյան

2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Լիտվայի Հանրապետություն, ք. Վիլնյուս, 2025թ. հոկտեմբերի 14-ից 18-ը

3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Գերմանական զարգացման համագործակցության GIZ կազմակերպություն

4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

«Transport Innovation Forum» խորագրով միջոցառմանը մասնակություն

5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

1. Մասնակցություն «Transport Innovation Forum» միջոցառմանը:

2. Մասնակցություն «Տրանսպորտի թվայնացման օրակարգ. տեսլական և նվաճումներ» թեմայով աշխատաժողովին:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

1) «Transport Innovation Forum»-ի շրջանակներում տեղեկացվածություն մասնակից երկրներում տրանսպորտի ոլորտի նորարարություններին: Հանդիպումներ և տրանսպորտի ոլորտին առնչվող հարցերի քննարկումներ տարբեր երկրների ներկայացուցիչների հետ:

2) Մասնակցություն «Տրանսպորտի թվայնացման օրակարգ. տեսլական և նվաճումներ» թեմայով աշխատաժողովին, որի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը՝

- տրանսպորտի ոլորտի թվայնացումը
-արհեստական բանականության լուծումների կիրառումը տրանսպորտի ոլորտում

3) Մասնակցություն «Տրանսպորտային գործառնությունների թվայնացում» թեմայով ինտերակտիվ սեմինարին:
4) Մասնակցություն Լիտվայի տրանսպորտային անվտանգության ադմինիստրացիայում կազմակերպված հանդիպմանը:
5) Այցելություն տեխնիկական զննության կազմակերպությունների ասոցիացիա, որտեղ քննարկվեցին տրասնպորտային միջոցների տեխնիկական զննության գործընթացի թվայնացման, վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության իրականացման առանձնահատկությունները, վտանգավոր բեռներ փոխադրող ցիստեռների փորձաքննության իրականացման պահանջները և տրանսպորտային միջոցներում կիրառվող արագության սահմանափակիչ սարքերի կիրառման պահանջները Լիտվայի Հանրապետությունում:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:
Հանդիպումները ճանաչողական բնույթի էին:
Հանդիպումների ընթացքում մի շարք երկրների ներկայացուցիչների հետ քննարկվել են երկկողմ քննարկման ենթակա հարցերը, ինչպես նաև դրանք քննարկելու նպատակով երկկողմ հանդիպումներ կազմակերպելու նպատակահարմարության վերաբերյալ հարցերը:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպման արդյունքում հնարավորություն եղավ ուսումնասիրելու տրանսպորտի ոլորտում թվայնացման և նորարությունների այլ երկրների փորձը, ինչպես նաև իրականացվող բարեփոխումները:
Լիտվայի տրանսպորտային անվտանգության ադմինիստրացիայի ներկայացուցիչների հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն ՀՀ-ԵՄ արևելյան գործընկերության ճանապարհային քարտեզով նախատեսված ԵՄ օրենսդրությանը ՀՀ օրենսդրությունը ներդաշնակեցնելու գործընթացի շրջանակներում անհրաժեշտ աջակցություն ցույց տալու և Լիտվայի օրենսդրական կարգավորումների վերաբերյալ փորձի փոխանակման վերաբերյալ:

Մոլդովայի ներկայացուցչի ձեռք բերվեց պայմանավորվածություն 2026 թվականի ընթացքում երկու երկրների իրավասու մարմինների խառը հանձնաժողովի նիստ կազմակերպելու և առկա հարցերը քննարկելու վերաբերյալ:

9. <u>ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄՍԱԹԻՎ</u>

Ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թուլտվությունների վարչության՝

Ավտոմոբիլային տրանսպորտի
քաղաքականության բաժնի պետ Ռ. Այվազյան

22.10.2025թ.